ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1964 Общественные науки

ՀԱՅԿ ԱԶԱՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Այս տարվա նոյեմբերի 12-ին Թբիլիսիում հանկարծակի կտրվեց Հայկ Ազատյանի կյանքի թելը և մեզնից ընդմիշտ հեռացավ Անդրկովկասի բանվորական շարժման հետ սերտորեն կապված վերջին խոշոր վետերանը։

1905 թվականի հեղափոխությունից ի վեր Թբիլիսիում, Բաքվում և ի վերջո Երևանում Հայկ Ազատյանը գործում էր որպես պրոֆեսիոնալ շարժման ղեկավարներից մեկը և բանվորական լայն զանգվածների կողմից սիրված էր որպես փորձված կազմակերպող ու բոցաշունչ պրոպագանդիստ։

Երկրորդ վճռական իրողությունը նրա կյանքում գյուղական միջավայրի հետ նրա ունեցած կապն է։ Ծնվել է Ազատյանը 1881 թվականին Մեծ Ղարաքիլիսա գյուղավանում և մանուկ տարիներին նախապես սովորել տեղի ծխական դպրոցում։ Հետագայում մասնավոր դասատուի պաշտոն է վարել նույն վայրում։ Այստեղից էլ սկիզբ է առնում նրա մոտիկ ծանոթությունը գյուղական կենցաղին ու կարիքներին։

Բանվորական և գյուղացիական զանգվածների հետ Ազատյանի ունեցած սերտ կապը հասկանալի է դարձնում նրա ծայրահեղ համեստությունը, մատչելիությունը, անմիջականությունը, հոգու և մտքի բյուրեղյա անկեղծությունն ու անգամ աշխատավոր մարդուն հատուկ, անպաճույճ, գրեթե տոլստոյական հագուստ-կապուստը։ Պարզությունը և անմիջականությունը հատկանշում էին նույնիսկ նրա գրելու ոճը և անգամ նրա բերանացի խոսքի ժողովրդական ինտոնացիան։

Անդրկովկասի բանվորական շարժման գործիչների մեջ դյուրին չէ մատնանշել մարդկանց, որոնց պրոլետարական դեմոկրատիզմը այնքան օրգանական լիներ, որքան Հայկ Ազատյանի մոտ։ Մի գործիչ էր նա, որն անընդունակ էր սեփական պաշտոնին ու կարիերային զոհաբերելու ժողովրդական զանգվածների շահն ու պահանջը։ Եվ դա սոսկ բնավորության հատկանիշ չէր, այլ քաղաքական կիրք ու համոզմունք, գործունեության գիտակցված ուղղություն։ Ազատյանը բանվորներին և գյուղացիներին ունկնդրելու սուր լսողություն ուներ։ Նա կարիերիստների ու բյուրոկրատների անողոք թշնամին էր, նրանց անխնա մերկացնողն ու խարազանողը։ Աշխատավորության դլխին ընկույզ ջարդողներին նա դասում էր չարաճճի այն ժամիշխանների շարքին,

որոնցից պահանջում էր ազատագրել ժողովրդի պարանոցը։ Ահա թե ինչու Հայաստանում սովետական կարգեր հաստատելու սկզբում մեր կուսակցության Կենտկոմը անհրաժեշտ գտավ Նրան նշանակել պրոֆմիությունների ղեկավար, իսկ փոքր-ինչ հետո նաև Կենտգործկոմի նախագահի տեղակալ։

Երիտասարդ Ազատյանը ասպարեզ իջավ որպես պրոֆեսիոնալ միությունների կազմակերպիչ, շարունակեց իր գործունեությունը որպես պրոլետարական պետության ու կոմունիստական կուսակցության ականավոր գործիչ և ավարտեց իր կյանքը որպես սովետական գիտնական և երիտասարդ սերնդի անզուգական ուսուցիչ ու դաստիարակ։

Նրա հանրածանոթ անցումը մենշևիզմից բոլշևիզմ պատահական չէր, այլ հեղափոխական շարժման և իր իսկ մտքի ու պայքարի խորացման բնական հետևանք։ Գործելով պրոֆմիությունների շարքերում, նրան մտահոգողը բանվորական կենցաղի բարելավման հոգսը չէր սոսկ, այլ բանվորական կյանքի վերափոխումը, բանվորների քաղաքական և սոցիալական ազատագրումը, նրանց մտավոր և բարոյական կերպարի զարգացումն ու կատարելագործումը։

Հեղափոխական պայքարի հալթության երաշխիքը նա նշմարում էր բանվորական շարժման միասնության մեջ։ Նրա երբեմնի ընկերները պատմում էին այն բողոքագրի մասին, որ մենշևիկների կազմակերպած օգոստոսյան բլոկի դեմ արտասահման էր հղել Ազատյանը՝ հուզելով Տրոցկու զայրույթը, և ընդհակառակը առաջ բերել Լենինի հրճվանքը։

Սկզբից ևեթ նա այն ղեկավարների հետ էր, որոնք պայքարի ընդհանուր ճակատ էին հարդարում բոլշևիկ հեղափոխականների հետ։ 1911 թվականին Շահումյանի հետ նա խմբագրում էր «Современная жизнь» սոցիալ-դեմոկրատական շաբաթաթերթը, իսկ 1915—1917 թվականներին Ար. Երզնկյանը և Ազատյանը բոլշևիկ Մռավյանի և Խանոյանի հետ խմբագրում էին «Պայքար» թերթը, որը, ի տարբերություն լիկվիդատորության և սոցիալ-շովինիզմի, կանգնած էր պարտիականության, ինտերնացիոնալիզմի և հակապատերազմական պրոպագանդայի դիրքերի վրա։

1918 թ. փետրվարին, երբ մենշևիզմի գործունեությունը հանգեց Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու քաղաքականության, Ազատյանը և իրեն համախոհ 300 ինտերնացիոնալիստները լքեցին մենշևիկյան շարքերը։ 1918—1920 թթ. նա ենթարկված էր ոչ միայն մենշևիկ նացիոնալիստների, այլև դաշնակցականների հետապնդումներին։ Հանրապետական Հայաստանի խորհրդարանում արտասանած իր ցասկոտ ելույթների համար դաշնակցականները որոշել էին տեռորի տալ Ազատյանին։ Դրանից նա խուսափեց Հայաստանից հեռանալով։

1920 թ. դեկտեմբերին Ազատյանն ու իր համախոհները մտան Վրաստանի կոմկուսի շարքերը, փոքր-ինչ հետո անցնելով Սովետական Հայաստան, նա Ղամարլուի ճակատում զենքը ձեռքին կռվում էր որպես շարքային զինվոր։ Թե որքան մեծ էր մեր կուսակցության քաղաքական վստահությունը դեպի շարքային այդ զինվորը, ակնարկ է այն փաստից, որ 1921 թ. ապրիլին նա Հայաստանի կոմունիստական կուսակցության երկրորդ քարտուղար ընտրվեց։

Ազատյանը հանդես չէր գալիս սոսկ որպես պրակտիկ գործիչ։ Նրա համար շարժման պրակտիկան կապված էր շարժման տեսության հետ։

Նա պատկանում էր Անդրկովկասի մարքսիստ այն պրոպագանդիստների թվին, որոնք իրենց գործունեությունը չէին սահմանափակում սոսկ շրջան գիտելիքների ժողովրդականացումով։

Նրա տեսական ընդհանրացումները բխում էին նախ և առաջ բանվորական և գյուղացիական, կուսակցական և արհեստակցական լսարաններին հետաքրքրող թեմատիկայից։ Նա թողել է բազմաթիվ տպագրված և անտիպ աշխատություններ, նվիրված միջազգային բանվորական շարժման, Հայաստանի պրոֆ. շարժման պատմության, պառլամենտական դեմոկրատիայի և պրոլետարական դիկտատուրայի հարցերին։ Գրել է նաև գյուղացիական շարժումների, գյուղատնտեսական բանվորների և գյուղատնտեսական կոոպերացիայի, հողի համայնացման ու պետականացման հարցերի մասին և այլն։

Ազատյանը, ինչպես ասում էին, «գոց գիտեր» Մարքսի «Կապիտալ»-ը. մեր ուսանողներն ու դիտնականները բազմաթիվ անգամ են ադիթ ունեցել լսելու նրա կենդանի օրինակներով հագեցած դասախոսություններն ու դեկուցումները՝ նվիրված Մարքսի և Էնգելսի տնտեսագիտական ուսմունքի խորը վերլուծությանը։ Ազատյանը ճանաչված մարքսիստ-տնտեսագետ էր ու հանրագիտական հմտությունների տեր գիտնական։ Պատահական չէ, որ երբ Թ. Ավդալբեկյանը ավարտեց «Կապիտալ»-ի առաջին և երրորդ հատորների հայերեն թարգմանությունը, Հայաստանի Կենտկոմը նրան վստահեց պատասխանատու այդ թարգմանության խմբագրությունը։

Վերջին քսան տարիների ընթացքում Թբիլիսիի Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտում ստանձնած լինելով Սովետական Միության ժողովուրդների պատմության ամբիոնը՝ Ազատյանը խորացավ այդ ասարկայի մարքսիստական-լենինյան հարցադրումների ուսումնասիրության մեջ։ Բազմակողմանի էրուդիցիան նրան հնարավորություն տվեց քննարկելու նաև հայ ժողովրդի պատմության հարցերը։ Եթե ոչ բանասիրական-աղբյուրագիտական կամ փաստագրական հետազոտությունների ու ընդհանրացումների մարզում, դեթ մեթոդոլոգիական ու սկզբունքային իր սուր դիտողություններով նա կարողացավ ընդհուպ մոտենալ և բեղմնավոր մտքեր առաջադրել նաև հայ ժողովրդի պատմության մի շարք հանդուցային պրոբլեմներին։ Նրա տեսադաշտից դուրս չմնաց նույնիսկ նախասովետական և սովետական հայ պատմավիպասանության քննական վերլուծությունը։ Այդ կարգի նրա դիտողությունները կարող են բեղմնավոր դիսկուսիայի նյութ ծառայել մեր գրողների, գրականագետների և պատմաբանների համար։

Հայկ Ազատյանը եղավ մեկը պրոֆեսիոնալ հեղափոխականների ու մարքսիստական գիտության անձնվեր այն զինվորներից, որոնք իրենց ամբողջ կյանքը նվիրեցին անդրկովկասյան ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի քաղաքական և սոցիալական ազատագրման պայքարին և հանդիսացան մեկը նրանց հասարակական կյանքի, սոցիալիստական պետականության և մշակութային շինարարության բանիմաց ու խանդավառ գործիչներից։ Նրա բոցավառ ելույթները անխնայորեն մերկացնում ու դատապարտում էին Անդրկովկասի հին վարիչների ցարդարար քաղաքականությունը, աշխատավոր ժողովրդին կոչ անում եղբայրության և համագործակցության։ Դրա համար էլ հենց նրան հալածում և հետապնդում էին ոչ միայն ցարական ժանդարմները, այլև մենշևիկյան ու դաշնակցական ոստիկանության գերբերները։

Անձնվեր ու բուռն գործունեության համար նա վաստակեց աշխատավոր ժողովրդի և մասնավորապես հայ աշխատավորության անվերապահ հարգանքն ու վստահությունը, սերն ու հիացմունքը։ Իր գործակիցների համար նա խղճի կենդանի զսպանակ էր և վարքագծի բարոյական չափանիշ։

Ազատյանը թողեց ազնիվ գրչով շարադրված բազմաթիվ գործեր, որոնք հետագա սերունդներին կօգնեն վերակենդանացնելու իր գաղափարական և բարոյական նկարագիրը։ Սակայն ամենամեծ ժառանգությունը, որ թողեց նրանց, ովքեր բախտ են ունեցել գործելու իր հետ և ճանաչելու իրեն, հիանալու իր անկրկնելի ու անմոռանալի անհատականությամբ, դա իր պայծառ կյանքի օրինակն է, անդրդվելի ու անվեհեր բնավորությունը, անզիջում սկզբունքայնությունը և անվերապահ նվիրվածությունը կոմունիզմի իդեալին և նրա կենսագործման համար սովետական ժողովրդի վարած պայքարին։

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ